



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր
համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, Հեռ. (0237)34441,
metsamormeria@yandex.ru

N641
25 դեկտեմբերի 2018թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան Պարոն Մաթևոսյան.

Կից ներկայացնում եմ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ին կայացած հերթական նիստի թիվ 43-Ն որոշումը և Մեծամոր համայնքի ղեկավարի 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N194-Ն որոշումը:

Առդիր՝ 58 թերթ

Համայնքի ղեկավար

Ռ. Գրիգորյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Ստորագրված է
08 01 2019



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2018 թվականի N 43-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ N 38-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 7 նիստի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 38-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

կողմ- 9

դեմ- 0

ձեռնպահ- 0

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԿՈՒՈՂՅԱՆ 
ԳԱԼՈՅԱՆ ՖԵԼԻՔՍ 
ԶԱՔԱՐՅԱՆ ԱՇՈՏ 
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ 
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՅԿ 
ՂՈՒԼԻԶԱՆՅԱՆ ՄԱՍԻՍ 
ՄԱԻԼՅԱՆ ԿՈՒՅԱ 
ՄԿՐՏՉՅԱՆ ԱՇՈՏ 
ՄԿՐՏՉՅԱՆ ՄԱՆՎ 



Համայնքի ղեկավարի ժ/պ՝



Ս. ԳԱԼՍՏՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մեծամոր համայնքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի 14-ի
N 43-Ն որոշման



2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՌԻ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Վարչական բյուջեի ծախսային մասի «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ծրագրի բաժին 01, խումբ 6, դաս 1, 4841 հոդվածից պակասեցնել 370,0 հազ դրամ, «Հանգիստ, մշակույթ, կրոն» ծրագրի բաժին 08, խումբ 3, դաս 1, 4234 հոդվածից՝ 600.0 հազար դրամ, «Կրթություն» ծրագրի բաժին 09, խումբ 1, դաս 1, «Թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածից պակասացնել 1000.0 հազար դրամ, բաժին 09, խումբ 5, դաս 1, «Մեծամորի մարզադպրոց» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածից՝ 710.0 հազար դրամ, «Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածից՝ 1000.0 հազար դրամ, ավելացնել «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ծրագրի բաժին 01, խումբ 1, դաս 1, 4111 հոդվածին 2900,0 հազար դրամ, 4212 հոդվածին՝ 100.0 հազար դրամ, «Փողոցների լուսավորում» ծրագրի բաժին 06, խումբ 4, դաս 1, 4212 հոդվածին՝ 680.0 հազար դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝

Ն. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2018 թվականի N 194-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ N 38-Ն որոշման 8-րդ կետը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի 2018 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում՝ համաձայն հավելվածի.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Համայնքի ղեկավար՝



Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 25-ին

ք.Մեծամոր



ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ղեկավարի 2018 թվականի դեկտեմբերի 25-ի
N 194 Ե որոշման

Մեծամոր համայնքի 2018 թվականի բյուջեում վերաբաշխում

Համայնքի վարչական բյուջեի ծախսային մասի «ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ծրագրի բաժին 01 խումբ 1 դաս 1 4233 հոդվածից պակասեցնել 200,0հազ. /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ, 4234 հոդվածից 200,0հազ. /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ և ավելացնել նույն ծրագրի 4264 հոդվածին՝ 200,0հազ. /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ, 4269 հոդվածին 200,0հազ. /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ :

Աշխատակազմի քարտուղար՝

Ն. Թադևոսյան